ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

17 հունիսի 2026թ. թիվ 646

Մ.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՀԱՆՔԱՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի և 209-րդ հոդվածի, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Երիցյանի 2026 թվականի հունիսի 16-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի աշխատակից՝ մարզային ենթակայության կրթական հաստատություններն անհրաժեշտ դասագրքերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով ու նորմացույց փաստաթղթերով ապահովելու գործընթացի, երեխաների առողջության պահպանման համար համապատասխան պայմանների ապահովման և անհրաժեշտ միջոցառումների իրականացման աշխատանքների, ինչպես նաև Վանաձոր համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատանքները համակարգող Մարիամ Պողոսյանին 2026թ. հունիսի 20-ին մեկ օրով գործուղել Կոտայքի մարզի Հանքավան բնակավայր՝ «Լուսաբաց» ճամբար մեկնող երեխաների ուղեկցումը կազմակերպելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնին՝ Մ.Պողոսյանի ամենամյա արձակուրդին ավելացնել մեկ օր:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

17/06/2026

X

ԱԻԴԱ ՇԻՐԻՆՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: SHIRINYAN AIDA 5301740180 Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

2026թ. հունիսի 17
ք.Վանաձոր